**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան 11 հունվարի 2016 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Քնարիկ և Դավիթ Թահմազյանների անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Քնարիկ և Դավիթ Թահմազյանները 2015թ. դեկտեմբերի 23-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ և 83.5-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասը,

կամ

2. բացահայտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանելով վերջնական դատական ակտերի՝ նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով վերանայման ենթակա լինելը:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում բերում է սուբյեկտիվ մեկնաբանության, ինչի արդյունքում տեղի է ունենում իրավական պետության սկզբունքների խախտում:

Ըստ դիմողի՝ նման մեկնաբանությունն ստեղծում է մի իրավիճակ, երբ առանց օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով անձի մեղավորությունն հաստատելու քրեորեն պատժելի արարքներ կատարելու փաստը դրվում է նվիրատվության պայմանագրի վերացման հիմքում: Դրա հետևանքով խախտվում են անձի իրավունքները, քանի որ չի պահպանվում անմեղության կանխավարկածի սկզբունքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նվիրատուն իրավունք ունի վերացնել նվիրատվությունը, երբ նվիրառուն ոտնձգություն է կատարել նրա, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ կամ նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ:

Իրավակիրառական պրակտիկայում այս դրույթի վերաբերյալ առկա են տրամագծորեն հակառակ մեկնաբանություններ:

Մասնավորապես՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 10.10.2014 թվականի վճռում արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ նվիրատվության պայմանագրի վերացման պարտադիր պայման է համարել կյանքի դեմ ուղղված ոտնձգության փաստի առկայությունը, որը հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեորեն պատժելի արարք, և որը պետք է հաստատված լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մինչդեռ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ նվիրատվության պայմանագիրը քաղաքացիաիրավական գործարք է և պետք է կարգավորվի միայն տվյալ ոլորտը կարգավորող իրավական նորմերի միջոցով: Այսինքն, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում քրեական գործով որոշման առկայության պարտադիր պայման, ապա նվիրատվության վերացման համար կարող է հիմք հանդիսանալ նվիրառուի ակնհայտ երախտամոռությունը, ինչը չի պահանջում նվիրառուի պարտադիր դատապարտում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

2. Քնարիկ և Դավիթ Թահմազյանների անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Քնարիկ և Դավիթ Թահմազյանների դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:
2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

11 հունվարի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-1